

զլխաւոր մասանց մէջ. և այն՝ կը կրկնեմ՝ նկատմամբ միջնադարեան ձեռն:

4. — Ազգային դրօշիս խաչը միջին դարեան յունական էր ըսի. և որ մեր քով կ'երեւի սահմանափակ կամ շրջանակաւոր ձեւերու մէջ միայն, Մեր միջնադարեան հնութեանց վրայ աւելի յաճախ երեցողն է յատկեալաւ կոշուածը, որոյ ստորին թէն երկարագոյն է քան միւս երեքը՝: Սակայն ունէինք զրեթէ սեպհական ձեւ մ'ալ, վերին ու ստորին թեւերն իւրաւու հաւասար, և քան զխոսորդաններն երկար: Գրեթէ սեպհական՝ կ'ըսեմ, ըստ որում աւելի յաճախեալ էր մեր քով քան այլոց, և յաճախութիւնն հարկաւ արդիւնքն է դիւտաւորութեան մը: Տարիներ յառաջ հուն. զարահայ բարեկամս Յուլիոս Միրզայեան այս ձեւը նշմարելով Միւթարեանց տպագիր նշանի մը վրայ, հարցուց ինձ պատճառն և ատիթ տուաւ զայն խուզարկելու հայ հնութեանց մէջ, Բախտաւոր եղալ գտնելու որոնածս՝ թէ երիցագոյն և թէ միջին դարերուն. զոր օրինակ՝ կ'երեւի այն Տեկորոյ նորակործան տաճարի ճակատին վրայ, հիմնարկութիւն Ե դարին, թէ և Հլկարեանը ձեւն ալ ժամանակակից համարիլ հաստատապէս. կայ Տաթևոյ եկեղեցւոյն ճակատին՝ Թ դարէն (Սիսական, 225). ի Ս. Ղազար պահուած 1248ի Չեռնադր. տետրակին լուսանցից մէջ՝ երկու անգամ. Խոռակերաց Ս. Նշանին վրայ՝ պահուած յէջմիածին, 1300 թուէն¹, և այլ զանազան տեղեր: Եւ որ աւելի ուշագրաւն է, նոյն ձեւով է վաղարշապատու Ս. Հոփսի սիմէի և Անուոյ Ս. Առաքելոց ներքին յատակաձեւն ալ, մին է և միւսը ԺԱ դարէն: Եթէ միւս խաչերուն քով փափաքելի էր հայկական խաչ մ'ալ ունենալ, մեզ չի պակսիր այդ: Ունինք հիմը, որոյ վրայ կը մնայ բարձրացնել շէնքը՝:

(Շարունակելի) Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Ա.Լ.ԻՇԱՆ ՈՒ ԲԱՅՅԻ

ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆՆ ԿԵՆ ԱՐԱՐՈՒԱԾ

ԱՆՑԻՆՔ

ԱԼԻՇԱՆ
ԲԱՅՅԻ

Տեսարանը կը ներկայացնէ դայա մը՝ որուն եզերքն է զարդի ձամբան, արիւնտ, երկար, քաղուած՝ հեռաւոր անսահմանութեան վեր, քանի մը դիպկներ հոս ու հոն կը հսկելին... Մայր մը կուրծքին սեղում իր տղան՝ կարծես կը քնանայ, մեւսած, աչքերն երկնքին, ողբերգական: Հորիզոնը թոստագոյն է խորունկ ու մրագիւն:

Քանի մը ծանր ինկած են ձեղքուած, տեղեւորափ, դաշտին վրայ՝ ուր կարմրութիւն մը կը տիրէ վերջապոյսին խաղաղութեանը մէջ: Միտ տիրութիւն մը կը սաւառնի ամէն տեղ, մահուան արմատիք մը տոկէ բանի վրայ, աշերակի սարսուռ մը...

Հեռաւոր կոյնակ մը կը հնչէ հեծկոտագին, մարած ու ողորմուկ զօղանքներով...

ԱԼԻՇԱՆ

(որ յանկարծ կ'երևայ ձամբուն եզերքը, տեւսիլքի մը պէս ձեռնակ)

Ո՞վ կը կանչէ նորէն ինձի մարդկութեան...

(Իր շարքը նայելով տխրութեամբ ու մեղմունքով)

Դեռ ծրխալունչ աւերակ մ'ես Հայաստան...
Նորէն կու գամ ողբալ ըզքեզ Հայրենիք,
Ո՞վ դու, սքրտիս ու մանկութեանը քաղցրիկ
Հին օրօրան, ահա՛ կու գամ վերստին,
Մահուան ծոցէն արթննալով, մեծ վըշտին
Երգը բերի, ու բերի երգն արիւնտ՝
Ազատութեան ու վըրէժի ճամբուն մօտ
Բուր ինկած հերոսներուն ի պատիւ...
Անոնք եղան արշալոյսներ բազմաթիւ
Երկընթիւ մէջ, ո՞վ Հայաստան...

(հեռաւոր կոյնակը կը հնչէ)

ԿԸ ԸՐԵՄԸ,

Գեղին ձայնն է, Յոյսին զարթոնքը վրստ
Գիշերին մէջ, երբ ամէն բան կը մեռնի,
Ո՞վ տաճարներ, ո՞վ խորաններ հայրենի,
Ո՞վ արթթի լուսածղրիկ անկիւններ,
Երբ երկուսն ըստուերին մէջ հրեշտակներ
Կը թևածեն խուկնով, լոյսով արբեցած՝

1. Յունական կամ լատինական՝ ոչ ծիսի, այլ ձեռնու սահմանն է միայն, անխոր գործածուած երկուքն ալ արեւելք և արևմուտք:

2. Թորամանեան, Հայ ճարտարապետութիւն. Տփղիս, 1911, էջ 21.

3. Գեղարուստ, Տփղիս, 1911.

4. Թորամանեան, Էյրմածնի Տաճարը, Տփղիս, 1910, էջ 16, 13.

Բուրվառներու կըրակին շուրջ, երբոր բաց
 Եւ երփներանգ ապակիէն կը փախչին
 Հոգեծաւոր, աստուածաշունչ մեղեդին
 Ու բոլոր հեքը սքըրտորուն վիրաւոր,
 Որ կ'աղօթեն ու կը սպասեն ամէն օր,
 Ազնուապաշտ իրենց վըշտին մէջ՝ բարի,
 Զի ցաւին մէջ ամէն չարիք կը մարի,
 Երբ ան մեծ է, գեղեցկութեան մը համար,
 Իբրեւ պատկերն երկինքներուն աստղավառ...
 Ի՛նչ կը տեսնեմ... Ո՛չ մէկ խորան... աւերակ
 Է ամէն բան, և իրիկունը միակ
 Կը պարուրէ սե պատանկոյ մ'անսահման
 Դաշտերն ամէն ու ճամբաներն ամենայն...
 Ոչ մէկ արծիւ կը տաւառնի ճախրասլաց
 Հայրենիքի ճամբուն վըրայ, թևաբաց
 Մհա՛ր կ'իջնէ...

Բ Ա Յ Ց Ի

(որ յանկարծ կ'երևայ ժառերուն ջրով, կարծես
 անծանօթ գերեզմանէ մը ելած, աչքերը խաւ-
 աքով չեցուն...)

Գիշեր... գիշեր...

ԱԼԻՇԱՆ

(խղճահարաբեամբ անդշ ճայնով մը)

Ին՞դն ուրուական...

Բ Ա Յ Ց Ի

(որ կը մօտենայ Ալիշանին, եղբայրորէն)

Գերեզմանիս մէջ արթուն -
 Կը մընայի, տարիներով, սև հողէն
 Ըսպասելով արշալոյսին հրերդէն...
 Հիմա կու գամ... բայց... ի՛նչ... ասիտս, շատ
 [հեռուն...]

(ողբերգական ժեստով մը ցոյց կու տայ հետա-
 շոր անսահմանութիւնը՝ որուն վրայ գիշերը
 կ'իջնէ դանդաղորէն (խլուկով կը հնչէ))

Մահուան զօղանջ... ո՛ր է շառափն արևուն
 Զոր էս տեսայ խաւարին մէջը չիբմիս,
 Ու գինովցաւ ճառագայթով խեղճ հողիս
 Հայրենաբաղձ, արշալոյսի կարօտով...

ԱԼԻՇԱՆ

Բայց ո՞վ էս դուն, հոս ի՛նչ կ'ընես, ճամբուն քով,
 Ուրկէ անցան տարագիրները քեզին,
 Հողերը, տես, միսերու պէս կ'արիւնին...

ԲԱՅՑԻ

Փեզ կը ճանչնամ... Ե՛ս ալ քեզ հետ երգեցի.
 Հայրենիքի ցաւերն ամէն, և ինձի
 Զի լըսեցին դիցազնական սերունդներ...
 Ես ցանեցի յոյսի բոսոր ծաղիկներ
 Ակութներու կըրակին մէջ՝ լուսավառ
 Կայծերու պէս...

ԱԼԻՇԱՆ

(քնարերգական, խանդավառ, մեղմիկ)

Ես ունեցայ քեզ համար
 Փընար մ'ամբողջ հողիս մէջ կարեւելը.
 Ո՛վ Հայրենիք, ո՞վ անմոռաց հին պատկեր
 Լոյսի, փառքի, գեղեցկութեան, Անահիտ,
 Ոսկիամայր, քանդակագեղ մեհանիդ
 Ես դափնիներ բերի, քերթող ծընրադիր,
 Զի դուն իրազ մ'էիր չըթնաղ, անպատիր...
 Երգեցի փառքն հերոսներուդ որ ինկան
 Խառուրդին մէջ, անմահութեամբ, ու վարդանն,
 Որ իր կրակոտ, վարդակարմիր արիւնով
 Ծաղկեցուց դաշտն Աւարայրի, Մեռնելով,
 Յաղթանակի գեղեցկութեամբ մ'երկնային,
 Եւ արշալոյս հազաւ տաճարն անմահին...

ԲԱՅՑԻ

Կ'ողջունեմ քեզ, ո՞վ Ալիշան, ո՞վ քերթող
 Հայրենասէր:

ԱԼԻՇԱՆ

Այս ճամբուն վրայ մահադող՝
 Կ'ողջունեմ քեզ ո՞վ հանճարեղ վիպասան,
 Պաշտամունքի մեծ խորանն էս անսասան՝
 Սերունդներուն համար, որունք արծիւներ,
 Պիտի բերեն ազատութեան արևներ.
 Գիշերին մէջ հայրենիքի...

ԲԱՅՑԻ

Կըրակն էս,
 Ո՞վ Ալիշան, որ չի մարիր արփագէս.
 Երկինքն էս դուն, որ անսահման կը բացուի,
 Ո՞վ սիրաբոյր և աննման ծերունի:
 Դուն երգեցիր շատ աւելի քաղցրօրէն
 Անուշ արուն Հայաստանի, ոսկեղէն
 Հունձքերն անոր, արիւնտտ հողը յուրթի,
 Որուն ծոցէն ալիք - ալիք կը յորդի
 Գարնան աւելը կենսաբորբ, երգեցիր
 Ծաղկունքն անոր դաշտերու վրայ՝ ցանուցիր,
 Ատղերն անոր, և Հայրենի ամէն գետ
 Փոթորկեցաւ թու թընարիդ կտրածքին հետ.
 Եւ օրհնելած իր արգանդէն բեղմնաւոր

Դուռն հանեցիր հարուստ զանձները բուրդ՝
 Ջորը «Սխուռանիդ» էջերուդ մէջ վեհօրէն
 Զեռեղեցիք, և անոնց հետ արեւէն
 Ոսկի տարաք մը թափեցիր:
 Դուռն մեծ էիր, ու տարազիր ծերունին,
 Աղբիականի մըրմունջը քեզ օրօրեց,
 Հնոսն, հետուն, մինչ սըզաւոր, տըրտմահնծ
 Քեզ կը կանչէր իր ծոցին մէջ առնելու
 Մայրական հողը փառահեղ քաջերու...

ԱԼԻՇԱՆ

Հիմա կու գամ, ու կը տեսնեմ որ միայն
 Հայրենիքն է մեծ լըռութիւն, գերեզման...

(մօտենալով մօր մը դիակին)

Տես մայր մը կայ կուրծքին տըղան է սեղմած,
 Եւ երկուքն ալ քընացեր են օրօրուած՝
 Հովերուն մէջ...

ԲԱՖՖԻ

(մօտենալով միւս դիակներուն, խոնարհելով
 անոնց վրայ)

Քանիններ կան դեռատի,
 Աչքերնուն մէջ մահը կարծես կը ժըպտի
 Խորրդաւոր գեղեցկութեամբ մը լեցուն...

ԱԼԻՇԱՆ

Հակատի անոնց լուսնի կաթոփն է օծուն,
 Զի մահաբոյր լացաւ գիշերն արծաթէ
 Երբոր ինկան ու քընացան, ո՞վ գիտէ,
 Վերջին անգամ երազեցին...

(կոշկակը կը հնչէ)

ԲԱՖՖԻ

Ո՞վ է ան
 Որ կը շարժէ սարսափին մէջը մահուան
 Խեղճուկ զանգակը հեռաւոր գիւղերուն...
 Ո՞ր ձեռքը դեռ կը յանդգնի սարսըռուն՝
 Արիւնթաթախ, բըզըքտըւած կարեկ՛վը
 Յեղին հոգին հընչեցնել...

(հրազկոտ)

Մեռելներ

Կարծես կ'ապրին ու քընացած են միայն,
 Ըսպասելով ըստորագեղ առտըւան,
 Երբ հողին մէջ՝ միօրինակ կըշտոյթով —
 Պիտի նետեն, — ո՞վ մեծ երազ հոգեթով —
 Սերմնացանները ցորենի հատիկներ,
 Եւ արիւնէն պիտի ծաղկին կակաշներ...

ԱԼԻՇԱՆ

Ոչ մէջ ծաղիկ թօշնած է դեռ, ամէն բան
 Դեռ կը հընչէ, կը մեծնայ դեռ, ու ճամբան
 Որ կ'երկարի գիականերով ծածկուած,
 Երկունք մըն է որ կը ծընի հըրարած
 Հունձքի պատկեր մը գեղեցիկ. ո՞վ պատրանք,
 Ո՞վ Հայաստան, երգել ըզքեզ դեռ կըրնանք,
 Զի վերստին պետի ծընիս մոխրէդ,
 Փիւնիկի պէս, ու պիտ' ապրին քեզի հետ
 Փառքերն ամէն զորս ունեցար, ու դափնին՝
 Որուն պըսակը դիցազները տըլին,
 Պիտի մընայ մահեանիդ մէջ, անթառամ.
 Ու քերթողները պիտի գան այս անգամ
 Քեզ երգելու հայրենասէր քընարով՝
 Կուրծքիդ վըրայ զարնան վարսեր սըփռելով:
 Կեանքին մէջն գիտախըրիւ պետ' անցնին,
 Եւ երգելով, քեզ երգելով տակաւին,
 Վերջին անգամ անմահութեամբ խընդունակ,
 Պիտի մեռնին Յաղթանակի թնին տակ...
 Պիտ' ըլլաս վէս ու գեղեցիկ, կողերէդ
 Ախատանքի պիտի հոսին արփաւէտ
 Լոյսն ու սոկին արգասաւոր՝ քըրտինքէն...

ԲԱՖՖԻ

Ես կը լըսեմ որ կոշկակները կ'երգեն
 Աւետելով հոգետաւիդ ցընծութեան
 Տօնը բարի...

ԱԼԻՇԱՆ

(քնարերգական ժեսով մը, երազկոտ)

Կը վերածնին Հայաստան...
 Նորէն ծաղիկ նորէն արեւ կը հագնին
 Դաշտերդ ամէն որ յազեցան արիւնին
 Ախքներէն, և ամէն բան կ'արթընայ,
 Հայոց աշխարհ քու մայրական հողիդ վրայ...

(Արշալոյս է, հորիզոնը կը կարմրի, վարդա-
 վառ: Հեռուն ցանգակատուն մը կը տեսնուի
 արևաօթ):

ԲԱՖՖԻ

Ես կը տեսնեմ որ սերունդներ կը ծընին,
 Մայրը կ'երգէ տըղուն փոքրիկ որրանին
 Քո՛վը նըտած, կ'երգէ ծայրով մը քաղցրիկ,
 Եւ արեւի տարափին մէջ ոսկեծղիկ
 Կը պոռթկան կեանքն իրենց դաշտերը հերկուած,
 Ու կը լեցուի մեղրով փեթակը լըռած...

ԱԼԻՇԱՆ

Այլ արթընցիր, Հայոց անուշ աշխարհիկ,
 Ո՞վ իմ սըրտիս դուն անմոռաց հին տեղիք,

Նորէն ապրէ՛, նորէն եղիր դրախտավայր,
 Ո՛վ գեղեցիկ աստուածունի վարդավառ,
 Ո՛վ մայրական ջերմիկ օրոց խանդակաթ,
 Քընացուր զիս չեղայ քերթող յուսահատ,
 Երգեցի քեզ պարզ քընարով մը ոսկի
 Պատրանքին մէջ երիտասարդ հասակի,
 Ու ծերունի՝ սիրաբւս մըխաց ու մըխաց
 Քեզի համար նըւագներով երկնասլաց...

ԲԱՅՅԻ

Կ'երթամ նընջել, Արշալոյսն է...

(Կը հեռանայ)

ԱԼԻՇԱՆ

Ես հեռուն,
 Ազրիականի ծըփանքներէն օրօրուն՝

Պիտի մընամ հայրենիքէս տարագիր,
 Քեզի կարօտ, ո՛վ գեղեզման, ո՛վ երկիր՝
 Որուն փոշին փառքի շունչով քըրքըրեց
 Հոռմէական բանակին դէմ Տիգրան մեծ...

(հետգհետ հեռանալով տեսարանէն, տխուր ու
 մեղմիկ ճայնով մը)

Մընաս բարո՛վ, հին օրօրան քաջերու,
 Ես ալ կ'երթամ շիրիմիս մէջ հանգչելու,
 Ու կը թողում բոլոր հոգիս՝ որ քընար...
 Դեռ կը հընչէ քաղցրբալուր քեզ համար...
 Ձի դեռ կ'ապրիս, ու դեռ կ'ապրիմ՝ հահապետ,
 Եւ բանաստեղծ, և դու փիւնիկ, աճունէդ
 Վերածընած անմահութեամբ՝ լուսեղէն,
 Հոգիդ լեցուն Ազատութեան արեւէն...

(վարագոր)

Ապրիլ 916

ԱՐՄԵՆ-ԵՐԿԱՅ

Ք Ա Ր Մ Ա Ն Ե Ո Ւ Ա

(ԱՐԱՐՈՒԱՆ Բ. ԽՄԵԼԵՐԳ)

Ալէն կը լըսուի հընչին մը փողի.
 Ուրիշ մը ձայնէն կը պատասխանէ.
 Երկու կողմանէ բոմբիւնք հետեւեղ
 Ու հետեւակաց, երկիրն կը թընդայ.
 Յանկարծ կը ցըցուի օդոյ մէջ դրօշ,
 Այլ ոմբն յանկարծ պարզած մեղ կու գայ.
 Ահա կ'երեւի վաշտ մը կազմ՝ պատրաստ.
 Ահա ուրիշ մ'ալ անոր դէմ կ'եմէնէ:

Աղէն մէջտեղին հող չի տեսնուիր.
 Աղէն սուսերներն գիրար կը վանեն.
 Մէկը սըրտին մէջ կը մըխէ միւսին.
 Արին կը հոսի, իսկ վերքեր կ'աճին:
 — Աղէօք անոնք ո՛վ են: Ո՞ր օտարական
 Ան շքեղ ուղիէն կըռուելու կու գայ.
 Կամ ո՛վ է այն որ երդուած է փորկել
 Իր ծընած երկիրն կամ թէ հոն մեռնիկ:

Մէկ երկրէ բլուր, ո՞հ. ու կը խօսին
 Մէկ լեզու. եղբայր կը կոչեն զիրար.
 Անոնց ամենուն դէմքերէն բլուր
 Մի եւ նոյն լեզուն յըստակ կ'երեւի.
 Ամենուն սոսնուուն եղաւ այս երկիր,
 Որ իմա արեան մէջ կը շաղկապուի,

Զոր ուրիշներէն բաժնեց ընտելութիւն
 Ապեանց եւ ծովու մեծ պատնէշներով:

Վա՛հ: Անոնցմէ ո՛վ սուսերն սըրբապիղծ
 Քաշեց՝ խոցելու նախ սիրտն իր եղբոր:
 Ո՛վ սարսափ: Աղէօք անիծեալ մարտին
 Նողկայի եւ գարշ պատհառն ի՞նչ է:
 Չեն գիտեր. ամէնքն եկած են մահ տալ
 Եւ կամ մահ աճուլ, բայց առանց կըրթի.
 Մի սպարապետի ծախուած են անոնք.
 Անոր հետ կըռուին, չեն հարցներ ինչուն:

Վա՛հ դժբաղդութիւն: Բայց կիներ չունի՞ն,
 Զունի՞ն մարեր այն յիմար մարտիկներ:
 Ինչո՞ւ ամէնքն սլ չեն գար դէպ ի դաշտ
 Զիրենք այս անարգ կըռուէն կորեղու
 Եւ ծերունիներն որ գերեզմանի
 Մուրը մըտածութեամբք են արդէն լեցուած,
 Ինչո՞ւ չեն փորձեր՝ կատաղի ամբոխն
 Խոհեմ խօսքերով մեղմուլ, ամոքել:

Ինչպէս որ երբեմն գեղջուկը նըստած
 Իր անդորր ուղիին ցած սեմին վըրայ՝
 Կ'երազէ տարափն որ կ'իջնէ հեռուն